Արձանագրություն N 3
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

06.05.2020թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գուլգուլյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Այվազյան /գնահատող/, Ե. Բաղդասարյան /գնահատող/, Ե. Մատասյան /բացող/, Ա. Մարգարյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Վ. Գուլգուլյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցը հրավիրվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն գների նվազեցման շուրջ անցկացվող միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակից ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ն իր վերջնական գնային առաջարկները ներկայացրել է էլեկտրոնային փոստի միջոցով:

1.2 ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ն իր գնային առաջարկը առաջին չափաբաժնի մասով նվազեցրեց 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամով՝ կազմելով 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ /ԱԱՀ չի վճարում/, երկրորդ չափաբաժնի մասով նվազեցրեց 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամով՝ կազմելով 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ /ԱԱՀ չի վճարում/, երրորդ չափաբաժնի մասով նվազեցրեց 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամով՝ կազմելով 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ /ԱԱՀ չի վճարում/:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Վ. Գուլգուլյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Վ. Գուլգուլյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

((. Գուլգուլյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների **համար Երևան քաղաքի Իտալիայի, Բեյրութի և Վ. Սարգսյան փողոցների ոռոգման ցանցերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը անգործության ժամկետ չի կիրառվում, քանի որ մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

4.4 ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Գուլգուլյան

Անդամներ՝ ---------- Ռ. Այվազյան

---------- Ե. Բաղդասարյան

---------- Ա. Մարգարյան

---------- Ե. Մատասյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան